ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-3-Ը ՄՈԼԴՈՎԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (Ք. ՔԻՇՆԵՎ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ

Արևիկ Արզոյան, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության արտաքին կապերի վարչության միջազգային համագործակցության բաժնի ավագ մասնագետ

2. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ

Մոլդովայի Հանրապետություն, ք. Քիշնև, 2024 թվականի դեկտեմբերի 2-3

3. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

Եվրոպական միություն (ԵՄ), Էներգետիկայի միջազգային գործակալություն (IEA)

4. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

EU4Energy ծրագրի շրջանակում իրականացված «Միջսահմանային էներգիայի ինտեգրում և առևտուր» խորագրով ֆորումը նպատակ ուներ համախմբելու կառավարությունների, էներգետիկայի ոլորտի կարգավորող մարմինների և ոլորտի փորձագիտական համայնքի հիմնական շահագրգիռ կողմերին՝ քննարկելու էներգիայի միջսահմանային ինտեգրման կենսական դերը ճկուն և կայուն էներգետիկ համակարգ ապահովելու գործում:

5. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ՝

Ֆորումի շրջանակներում ուսումնասիրվել և քննարկվել են միջսահմանային էներգահամակարգի ինտեգրման առավելություններն ու մարտահրավերները, կառավարման շրջանակները և փոխկապակցման ուղիների զարգացման տարածաշրջանային պլանավորումը:

Մասնակիցների՝ քննարկումներին անմիջական ներգրավվածության մոդելը թույլ տվեց կիսել պատկերացումները տարածաշրջանային փոխկապակցվածության ուժեղացման և գործընթացում մարտահրավերների հաղթահարման վերաբերյալ, ինչպես նաև հնարավորություն ընձեռեց խթանելու երկխոսությունը և կիսելու լավագույն փորձը՝ էներգետիկ անվտանգության և մաքուր էներգիայի անցման ուղղություններով:

6. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

ՀՀ պատվիրակության անդամ, «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի էներգահամակարգերի շուկայում սպասարկման և տեղեկատվության ապահովման ծառայության առաջատար ճարտարագետ Տաթևիկ Հակոբյանի կողմից ներկայացվեց «Տարածաշրջանային կապի զարգացման հայաստանյան տեսլականը» խորագրով սահիկաշար:

Ֆորումի ընթացքում հարևան երկրների կողմից ներկայացված փորձի վերաբերյալ հայկական կողմից բարձրացվել են մի շարք հարցեր, ստացել սպառիչ կամ բավարար պարզաբանումներ, պատասխաններ:

7. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Հաշվի առնելով հանդիպման բնույթը՝ որոշումներ չեն կայացվել, փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ՝ ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հաշվի առնելով հանդիպման բնույթը՝ հստակ սահմանված ժամկետներով կատարման ենթակա պայմանավորվածություններ ձեռք չեն բերվել:

9. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ

10.12.2024թ.